

յետոյ շատապեցին ծածկել իրանց մերկութիւնը՝ արդէն առաջին քայլն արին դէպի կեղծաւորութիւնը. Եւան ձգառում էր «անել այն, ինչ կամննում է, բայց ծածկել այն, ինչ որ արուած է»:

Մարդկութեան այս նախնական զոյզից յետոյ՝ պինդաւորութիւնը քաղաքակրթութեան հետ զուգընթաց աճում է: Կեղծաւորութեան ոյժը հնդինակի կարծիքով կայսնում է նրանում, որ դա ընդունակ է «ջօշափել մարդկային բնութեան բոլոր բնենները»: Այսպէս օրինակ՝ «ամենատութիւնն անզամ նա համարում է մի առարինութիւն ցագեցած կեղծաւորութեամբ»:

Սակայն ոչ մի դարում կեղծաւորութիւնն այնպիսի լայնածաւալ չափեր չէ ընդունել, ինչպէս XIX դարում՝ նա այս դարն անուանում է «կեղծաւոր դար», «Տարտիւֆի դար», որովհետև մնաց շրջապատող օդը «ստութեան մթնոլորտ է», իսկ ջուրը՝ «խարէութեան ովկիանոս»: Նա զանազանում է արտաքին և ներքին կամ ֆիզիկական, բարոյական և մտաւոր կեղծաւորութիւն. կեղծաւորութիւն սրտի, կեղծաւորութիւն մտքի, կեղծաւորութիւն հասարակական և առօրեայ կեանքի իրաքանչյուր քայլափոխում, մարդկային սերնդին զբաղեցնող ամենն մի առարկզում: Բայց հեղինակի ցանկութիւնն է ժողովրդի կրթութեան և զարգացման դործը այնպիսի առողջ հիմքերի վրայ գնել, որ հարիւր տարուց յետոյ «Տարտիւֆի դարին» յաջորդէ «Ճշշմարտութեան, շիտակութեան դար»:

Ինչպէս առհասարակ «Սիրոյ բնախօսութեան», հեղինակի գրուածքներից շատերը՝ այնպէս էլ ներկայ գրքոյկը զրուած է շատ սահուն և գեղեցիկ լեզուով: Թարգմանութիւնը թէն տեղ տեղ զուրկ չէ անհարթութիւններից, այնուամենայնիւ ընդհանրապէս յաջող է:

Թարգմանիչը զրքին կցել է մի յաւելուած, ուր ընդարձակ կամ համառօտ կերպով բացաարուած են մի քանի բառեր և անուններ:

Վ. Ն.

«) DR. L. GUMPLOWICZ: «Nationalismus und Internationalismus im 19. Jahrhundert», Berlin, 1902: (Դ-ր Լ. Գոմպլովիչ. «Ազգայնութիւնը և միջազգայնութիւնը 19-րդ դարում»):

Նոր չէ ազգայնութեան հարցը նա գոյութիւն է ունեցել դեռ շատ հին ժամանակներից սկսած, իր հետ միասին գոյութիւն տալով համապատասխան կարծիքների ու համոզմունքների: Սակայն նա ոչ մի ժամանակ այնպիսի սուր կերպարանք,

այսպիսի որոշ ձեւակերպութիւն չէ ստացել ինչպէս վերջին
19-րդ դարում։ Պատճառը հասկանալի է, Սկզբում մարդիկ ա-
ւելի քիչ են նախապատրաստուած եղել, աւելի քիչ գիտակցու-
թիւն են ունեցել՝ իրանց ընդհանուր-աղջային շահերը ըմբռնե-
լու և համապատասխան միջներով պաշտպանելու համար։
Քաղաքակրթութիւնը ժամանակի ընթացքում զարգացրեց այդ
ցիտակցութիւնը և աւելի պնդացրեց աղջայնական գաղափարի
արժանակությունը։

Տպագրական գիւտից առաջ իւրաքանչիւր աղջի զրակա-
նութիւնը միայն սակաւաթիւ ընտրեալիների սեփականութիւնն
էր կազմում Մեծամասնութիւնը նրա հետ առնչութիւն չու-
ներ և նրա գոյութիւնը պահպանելու մասին չէր ել մտածում։
Բայց յարնուեց Գուտաներէրցը, զործածութեան մէջ մտաւ
տպագրութիւնը և զրութիւնը բոլորովմն փոխուեց։ Գրաւոր
լեզուն օրէցօր ծաղկել սկսեց, իւրաքանչիւր աղջի զրականու-
թիւնը ընդհանուր-աղջային սեփականութիւն գարձաւ, մի սե-
փականութիւն, որի համար մարդիկ պատրաստ էին ամենամեծ
դոհարերութիւններ անհեռու։

Այդպիսով պարզուեց ամենքի համար, որ մայբենի լեզուն
ու գրականութիւնն է իւրաքանչիւր աղջի ինքնուրոյնութեան
հիմնագրը և այդ զործածները ամեն կերպ զարկ տուին աղ-
ջային գաղափարի զարգացմանը...»

Վրայ հասաւ 19-րդ դարը, Յոնկուած էր Գրանսիական
մեծ յեղափոխութիւնը, մի յեղափոխութիւն, որի նշանաբանն էր՝
«ապատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» բոլոր մարդկ-
եանց համար։ Ֆրանսիայիները ոչնչացրելու կայսերական դահը,
վրէմի հարուած առևին իշխաղ աղնուականութեանը և ապա ա-
ռաջ շարժուեցին, որպէս զի հարեւան աղջերին էլ աղատու-
թիւն չորդենու Սակայն այստեղ նրանց հանդէպ, իբրև մի ա-
մուր պատճէց, կանգնեց աղջայնական գաղափարը, թէ սպա-
նացիները, թէ իտալացիները, թէ գերմանացիները և թէ ռուս-
ները բոլորն էլ ուի կանգնեցին, որպէս զի իրանց աղջային
ստացուածքն ու կարգերը պաշտպանեն։ Ոչ ոք չէր ուզում տես-
նել ու լսել՝ «աղատութիւն, հաւասարութիւն ու եղբայրութիւն»
խոստացող Գրանսիայիներին, Նրանց համար աւելի թանգ էին
աղջային կարգերն ու արժանապատութիւնը։

Եւ աղջային գաղափարը յաղթեց, Դրանից յետոյ այդ մի-
եւնոյն գաղափարը շարունակեց իր աղջու դերը ամրող 19-րդ
դարի ընթացքում։ Նա շատ արիւնահեղ ընդհարումների պատ-

ճառ դարձաւ, շատ զոհներ կլանեց, և միայն չափազանց փոքր չափով տեղի տուեց միջաղդայնութեան գաղափարին:

Ահա այդ հետաքրքրաշարժ երեւոյթը, այդ ազգային մըրս-ման ու ընդհարումների համառօտ պատմութիւնն է տավիս յայտնի սօցիօլոց Գումալովիչի Մեծ չէ նրա զիրքը ծաւարով (66 երես), բայց հարուստ ու հետաքրքրական է բովանդակութեամբ երես:

Շօշափերով ազգայնութեան և միջաղդայնութեան գաղափարները, հեղինակը խօսում է ընդհանրապէս եւրոպական բուլը ազգերի մասին և առանձնապէս կանգ է առնում Աւստրօ-Հունգարիայի, Ռուսաստանի և Շվեյցարիայի վրայ, որովհետեւ առմենից շատ այդ երկրներում են ասլում բազմացեղ ազգեր, ամենից աւելի այդուեղ է աչքի ընկնում ազգային լեզուների մրցումը և ազգային գաղափարի կատարած դերը Խօսելով այդ նիւթերի մասին, պ. Գումալովիչը գուրս է բերում, ի միջի այլոց, այն եզրակացութիւնը, թէ ինչ կուսակցութիւն էլ ու-գում է լինի, նա կարող է գոյութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ պաշտպան է հանդիսանուած ազգային լեզուին ու առանձնայատկութիւններին, իսկ միջաղդայնութեան գաղափարը, չը նայելով քաղաքակրթութեան տուած բազմաթիւ ու բազմազան արդիւնքներին, հաղորդակցութեան հեշտ ու յարմարաւոր միջոցներին, դարձեալ ճաշին դեր է կատարում:

Ե. Թ.